

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. մարտի 9-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **Գիտական հաղորդում (Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոց. Ա.Մանասյան):**
2. **Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):**
3. **Հաղորդում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):**
4. **2017-2018 ուսումնական տարվա ուսումնական պլանների հաստատում (զեկ.՝ դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):**
5. **Ընթացիկ հարցեր:**

1. **ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոց. Ա.Մանասյան):**

Զեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) մշակման գործընթացը, հայնտեց նաև, որ Նախագիծն ուղարկվել է «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով): Զեկուցողը կանգ առավ սահմանադրական դատարանի լիազորությունների հետ կապված՝ Նախագծում տեղ գտած առավել վիճելի կարգավորումներին, օրենսդրական նորամուծություններին: Մասնավորապես, որպես էական նորմաժողովուն, զեկուցողն անդրադարձավ սահմանադրական մարմինների միջև վեճերի լուծման՝ Սահմանադրական դատարանի լիազորությանը: Այդ լիազորության համատեքստում զեկուցողն անդրադարձավ այն խնդրին, որ վիճելի է այն հարցը, թե օրինակ, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրության 139-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ նախագահի Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը պետք է իրացվի նորմատիվ իրավական ակտերի վերացական սահմանադրական վերահսկողության թե սահմանադրական մարմինների միջև վեճերի լուծման լիազորության շրջանակում՝ հավելելով, որ Նախագիծը գնացել է երկրորդ

ճանապարհով: Զեկուցողը նշեց, որ օրենքի Նախագծի մշակման արդյունքում քննարկման առարկա է դարձվել նաև հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրականության վիճարկման նպատակահարմարության հարցը՝ հաշվի առնելով, որ նախատեսված է հանրաքվեի դրվող օրենքի նախագծի սահմանադրականության վիճարկման հնարավորություն: Սակայն հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել ոչ միայն օրենքի, այլ գործնականում դրա կիրառության սահմանադրականությունը՝ Նախագծով սահմանվել է նաև հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրականության վիճարկման հնարավորություն: Իբրև առանձին խնդիր՝ զեկուցողն անդրադարձավ նաև Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին Սահմանադրական դատարանի կողմից եզրակացություն տալու խնդրին այն կտրվածքով, որ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար, և փաստորեն ստացվում է, որ Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնա արարքի որակման խնդրին, ինչը դուրս է վերջինիս իրավասության շրջանակներից, և այս պարագայում վերջինիս խնդիրը պետք է լինի սուսկ համապատասխան ընթացակարգերը պահպանված լինելու հանգամանքը գնահատելը: Վերջին դիտարկման հետ կապված՝ գիտական խորհրդի նախագահ, պրոֆ. Գ.Ղազինյանը նշեց, որ խնդրի լավագույն լուծում կարող էր լինել սահմանադրական պատասխանատվության մասին սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակման սկզբնական փուլում շրջանառվող գաղափարի իրացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ենգիբարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Գաբուզյան):

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում քրեական իրավունք ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական: Հանձնարարել ամբիոնին առավել հետևողական լինել նոր կադրերի պատրաստման հարցում (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՄԵՑԻՆ. Հաղորդում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյանը տեղեկացրեց, որ 7 ավարտական աշխատանքներ են պատրաստվում ամբիոնում (5 առկա, 2 հեռակա ուսումնամբ ուսանողների կողմից), որոնք առավելագույնը 20 օրում պատրաստ կլինեն: Ամբիոնի վարիչը նաև նշեց, որ ավարտական աշխատանքների որակն այս պահին գոհացուցիչ չէ, սակայն վերջնական եզրահանգումներ կարող են արվել, երբ աշխատանքներն ամբողջությամբ պատրաստ լինեն:

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը տեղեկացրեց, որ 18 ավարտական աշխատանքներ և 6 մագիստրոսական թեզեր են պատրաստվում ամբիոնում: Ավարտական աշխատանքներից 7-ը պատրաստ են, իսկ մյուսները սահմանված ժամկետում պատրաստ կլինեն, և այս առումով ամբիոնը մտավախություն չունի:

Եվրոպական և միազգագային իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյանը տեղեկացրեց, որ 4 ավարտական աշխատանքներ և 4 մագիստրոսական թեզեր են պատրաստվում ամբիոնում, որոնք սահմանված ժամկետում պատրաստ կլինեն:

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյանը տեղեկացրեց, որ 11 ավարտական աշխատանքներ և 10 մագիստրոսական թեզեր են պատրաստվում ամբիոնում: Ավարտական աշխատանքներից 5-ը պատրաստ են, իսկ մյուսները սահմանված ժամկետում պատրաստ կլինեն, և այս առումով ամբիոնը մտավախություն չունի:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Մեղրյանը տեղեկացրեց, որ 18 ավարտական աշխատանքներ և 7 մագիստրոսական թեզեր են պատրաստվում ամբիոնում: Մագիստրոսական թեզերից 1-ը պատրաստ է, 3-ը՝ բավարար վիճակում, իսկ 3-ն էլ կասկածելի վիճակում: Ավարտական աշխատանքներից 1 պատրաստ է, մյուս 15-ի հետ կապված՝ համապատասխան ուսանողներն ակտիվորեն աշխատում են, իսկ 2-ը կասկածելի վիճակում են:

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանը տեղեկացրեց, որ 25 ավարտական աշխատանքներ և 8 մագիստրոսական թեզեր են պատրաստվում ամբիոնում, որոնցից կասկածելի է 4 ավարտական աշխատանքների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Պրոֆ. Գ.Ղազինյանը հայտնեց, որ «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» հաստատվելուց հետո մագիստրոսական թեզերի պատրաստումը և պաշտպանությունն անհարժեշտ է իրականացնել այդ կարգով սահմանված պահանջներին համապատասխան, որից մեկն էլ ամբիոնային նախապաշտպանությունների կազմակերպումն է և առաջարկեց ամբիոնների վարիչներին հետևողական լինել հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՄԵՑԻՆ. 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական պլանների հաստատում (զեկ.՝ դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա ուսումնական պլանները՝ ընդգծելով մագիստրատուրայում 1.5 ուսումնակա տարվա անցնելու հանգամանքով պայմանավորված՝ մագիստրոսական ծրագրերում տեղ գտած փոփոխությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2017-2018 ուստարվա ուսումնական պլանները:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը հաստատել «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» դասընթացի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» դասընթացի ծրագիրը:

5.2 ԼՄԵՑԻՆ. Քաղաքցիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Սադոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Սադոյանի՝ «Բժշկական ծառայություններ մատուցող սուբյեկտների քաղաքացիաիրավական պատասխանատվությունը » վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Հայկյանցին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2 ԼՄԵՑԻՆ. Քաղաքցիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Գաբուզյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Գաբուզյանի՝ «Հայցային վաղեմության քաղաքացիաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջյան

ՔԱՂՎԱԾՔ

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017Թ. ՄԱՐՏԻ
9-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը հաստատել «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» դասընթացի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» դասընթացի ծրագիրը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Մուջյան

Իրականի հետ ճիշտ է :

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017Թ. ՄԱՐՏԻ
9-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Սաղոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Սաղոյանի՝ «Բժշկական ծառայություններ մատուցող սուբյեկտների քաղաքացիաիրավական պատասխանատվությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Հայկյանցին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Սուլջյան

Իրականի հետ ճիշտ է :

Խորհրդի քարտուղար

Տ.Սուլջյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017Թ. ՄԱՐՏԻ 9-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Գաբուզյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Քրիստինե Գաբուզյանի՝ «Հայցային վաղեմության քաղաքացիաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Սուջյան

Իրականի հետ ճիշտ է :

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ ՈՒՆ

Քրեական իրավունքի ամբիոնի 2016-2017թթ. ուս. տարում կատարած
աշխատանքների

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Քրեական իրավունքի ամբիոնի դասախոսների կողմից պատրաստվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը: Այդ կապակցությամբ տարբեր քննարկումներ են կազմակերպվել պրակտիկ աշխատողների մասնակցությամբ: Հանդիպումները կազմակերպվել են ՀՀ արդարադատության նախարարության և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից: Պատրաստվել է նաև ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը, որը նույնպես քննարկվում է:

Բացի այդ, ՀՀ արդարադատության ակադեմիայում ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանը՝ դատավորների և դատախազների վերապատրաստման շրջանակներում դասախոսություններ է կարդացել ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի և նախագծի վերաբերյալ: Ամբիոնի պրոֆեսոր Ս. Առաքելյանը, որը նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորն է, դասախոսություններ է կարդացել քննիչների, դատախազների և դատավորների վերապատրաստման դասընթացներում: Ա. Մարգարյանը դասախոսություններ է կարդացել ՀՔԾ-ի քննիչների, ԴԱՀԿ աշխատակիցների, փաստաբանների, դատախազների և դատավորների վերապատրաստման դասընթացներում, արդարադատության ակադեմիայում: Ամբիոնի դոցենտ Տ. Սիմոնյանը դասախոսություններ է կարդացել ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների քննիչների վերապատրաստման դասընթացներում: Ամբիոնը նաև մասնագիտական կարծիք է ներկայացրել <<Պրոբացիոն ծառայության մասին>> օրենքի նախագծի, քրեական և քրեակատարողական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների չորս նախագծերի կապակցությամբ:

Մագիստրոսական կրթական ծրագրի բարեփոխման հետ կապված «Քրեական իրավունք և դատավարություն», ինչպես նաև «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրերում կատարվել են փոփոխություններ՝ հանվել են մի քանի դասընթացներ,

ընդգրկվել է մեկ նոր դասընթաց՝ «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները»։ Նշված փոփոխությունները միտված են նպաստելու աշխատաշուկայի պահանջների բավարարմանը:

Բացի այդ, ամբիոնի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներն ընտրվում են նկատի ունենալով իրավակիրառ պրակտիկայի պահանջներն ու ժամանակի մարտահրավերները:

Կրթական ծրագրեի արդիականացում՝ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Կազմվել են քրեական իրավունքի ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացների (թվով 34 առարկա) ծրագրերը, որոնցում մեծ տեղ է հատկացվել ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությանը:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, փոփոխություններ են կատարվել մագիստրոսական ծրագրով դասավանդվող դասընթացների մեջ:

Դասավանդման մեթոդիկայի կատարելագործում

Ազատ հաճախումներին անցնելու հետ կապված ավելի մեծ ուշադրություն է դարձվում ուսանողներին իրենց գիտելիքների պրակտիկ կիրառման հմտություններ ձևավորելուն: Ամբիոնում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների սեմինար ու գործնական պարապմունքներն անց են կացվում հիմնախնդիրների պրակտիկ քննարկման հիման վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում է ուսանողների մեջ իրենց տեսական գիտելիքների գործնական կիրառման ունակությունների ձևավորմանը: Այդ նպատակով պարապմունքներն անցկացվում են դատական և իրավակիրառ այլ պրակտիկայի նյութերի քննարկմամբ: Ուշադրություն է դարձվում նաև օրենսդրական բացերի ու թերությունների վեր հանմանը, ընդ որում, ուսանողներին առաջարկելով դրանք վերացնելուն ուղղված առաջարկություններ մշակել: Դասախոսությունները մեծ մասամբ իրականացվում են ակտիվ քննարկման միջոցով, երբ ուսանողները նախապես ծանոթանալով նյութին՝ դասախոսության ժամանակ քննարկում են առավել կարևոր հիմնախնդիրները: Ամբիոնի դոցենտ Աննա

Մարգարյանը մասնակցել է Թբիլիսիում և Օրիուսում կազմակերպված՝ իրավագիտության դասավանդման մեթոդների կատարելագործմանն ուղղված վերապատրաստման դասընթացներին: Ամբիոնի դասախոսները և ասպիրանտները մասնակցել են նույն թեմայով Երևանում կազմակերպված դասընթացին:

Գիտելիքների ստուգման և գնահատման ձևերի, մեխանիզմների կատարելագործում

Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների (բացառությամբ զուտ տեսական մի քանի առարկայից) քննություններն ու ստուգումները իրականացվում են պրակտիկ խնդիրների միջոցով: Մագիստրատուրայում կիրառվում է ուսանողի հետազոտական աշխատանքի հիման վրա գնահատման մեխանիզմը, ընդ որում, այդ աշխատանքները զեկուցվում և քննարկվում են դասաժամին: Բակալավրիատում ավարտական քննությունները գրավոր՝ պրակտիկ խնդրի ձևով առաջադրանքի հիման վրա գնահատելուն անցնելու կապակցությամբ պատրաստվել է խնդրի լուծման գնահատման չափանիշներ: Պատրաստվել են ավարտական քննության համար չորս խնդիրներ: Ուսանողներին տրամադրվել է խնդրի նմուշային տարբերակ, ինչպես նաև այդ խնդրի լուծման օրինակը:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Ամբիոնում ստեղծվել են բակալավրիատում դասավանդվող բոլոր առարկաների դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները: Պատրաստվել է քրեական իրավունքի ընդհանուր մասի խնդրագիրքը: «ՀՀ քրեական իրավունք (Ընդհանուր մաս)» և ««ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս)» դասագրքերը երեք անգամ վերահրատարակվել են իսկ «Իրավական վիճակագրություն» և «ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական ձեռնարկները վերահրատարակվել են երկու անգամ: Մագիստրատուրայում դասավանդումը հիմնականում իրականացվում է անհրաժեշտ գրականություն, այլ, այդ թվում՝ օտարալեզու աղբյուրներ առաջարկելով, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների միջոցով: Պատրաստվելվել և ֆակուլտետի խորհրդի կողմից տպագրության է երաշխավորվել մագիստրատուրայում դասավանդվող «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» դասընթացի ուսումնական ձեռնարկը:

Գիտահետազոտական աշխատանք

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով. անչափահասների և երիտասարդների հանցավորություն, անչափահասների և երիտասարդների քրեական պատասխանատվության առանձնահատկություններ, հանցավորության վիկտիմոլոգիական գործոններ, բռնության մոտիվացիայով հանցագործություններ, կոռուպցիա, քրեակատարողական ընթացակարգերի կատարելագործում: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվում են գիտական հոդվածների և մենագրությունների ձևով, զեկուցվում են տարբեր գիտաժողովներում: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել վեց գիտական հոդված: Ամբիոնի ասպիրանտները տարեկան գիտաժողովին ներկայացրել են 5 գիտական հոդված:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում ՈՒԳ աշխատանքներին: Ֆակուլտետային ՈՒԳ նիստերը անցակացվում են պատշաճ մակարդակով. ներկայացման են թույլատրվում միայն պատշաճ գիտական մակարդակով գրված աշխատանքները: Դրանցից չորսը անցած տարի երաշխավորվել են տպագրության ԵՊՀ ՈՒԳԸ ամենամյա հանդեսում: Կարևոր ենք համարում նաև ուսանողներին ընդգրկել ամբիոնի կողմից իրականացվող գիտական հետազոտությունների մեջ: Այս տարի դեկտեմբերի 8-10-ը IRZ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվեց դատախազ-մրցույթ քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացմամբ, որտեղ հաղթող ճանաչվեց ԵՊՀ-1 թիմը: Ներկայումս նախապատրաստվում ենք հաջորդ տարվա մրցույթին: Բացի այդ այս տարի կազմակերպվեց պրոբացիայի վերաբերյալ ԳԴՀ, Բեռլինի Էլիս Սոլումոն ինստիտուտի դասախոս Վոլֆգանգ Այխշթեյթերի դասախոսությունների շարքը:

Կադրերի պատրաստման բնագավառ

Ամբիոնը ունի հիմն գեռակա ուսուցմամբ ասպիրանտ և հինգ հայցորդ, ովքեր աշխատում են քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի և

կրիմինալոգիայի բնագավառների արդիական թեմաների վրա: Հաշվետու ժամանակահատվածում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մեկ հեռակա ուսուցմամբ ասպիրանտ և երկու հայցորդ: Ամբիոնի երկու դասախոսներ՝ Տիգրան Սիմոնյանը և Աննա Մարգարյանը ավարտել են իրենց դոկտորական ատենախոսությունները և մոտ ապագայում դուրս կգան պաշտպանության:

Թերություններ ամբիոնի աշխատանքներում

Ամբիոնի աշխատանքներում կան նաև որոշ թերություններ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով:

Մասնավորապես դեռ չի հրատարակվել քրեական իրավունք առարկայի հատուկ մասի խնդրագիրքը: Սա հիմնականում պայմանավորված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի հետ կապված աշխատանքներով:

Դեռևս անելիքներ կան մագիստրոսական թեզերի որակի բարձրացման ուղղությամբ: Այս հարցում էական դեր է կատարում նաև գրականության սղությունը, իսկ երբեմն էլ բացակայությունը: Պակաս կարևոր չէ նաև որոշ մագիստրոսների պատրաստվածության ցածր մակարդակը, ինչպես նաև մագիստրոսական թեզերի մեծ քանակը: Դասալսումները չեն իրականացվել այնքան հաճախակի, որքան ցանկալի էր:

ամբիոնի վարիչ

Ա. Գաբուզյան